Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Ռ.Պատկանյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հայերենով ուսուցմամբ դասարաններում՝ ինֆորմատիկայի(13 դասաժամ), տեխնոլոգիայիի (9 դասաժամ), ռուսերենով ուսուցմամբ դասարանների՝աշխարհագրության(7 դասաժամ),կենսաբանության (6դասաժամ),պատմության (10 դասաժամ),ինֆորմատիկայի(5 դասաժամ)ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 30-ից մինչև սեպտեմբերի12-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. սեպտեմբերի 14-ին՝ ժամը 14:00-ին**, Արմավիրի մարզի Վաղարշապատի Ռ.Պատկանյանի անվան հ.9 հիմնական դպրոցում, հասցե՝ք.Վաղարշապատ,Օրջոնիկիձե 27/1: Տեղեկությունների համար զանգահարել (0231) 4-29-66 հեռախոսահամարով: